

Կոլլոտի Մատենադարանը Հաստատուած էր վերջնապէս, Գում-Գափու, Պատրիարքարանի մօտ, Մայր-Եկեղեցւոյ բակը, Հաւանաբար ՏՆԱՆ-ԿԱՑ ՍԵՆԵԱԿ՝ ըսուած քարուկիր եւ երկյարկանի շէնքին մէջ, որ ԹԱՆԳԱՐԱՆ ալ ըսուած է

եկեղեցին է. 2. Իբր կենդրոն ազգային գործերու՝ յարմարութիւն ունեցած է գրքի եւ գրչի մարդիկ հիւրընկալելու. 3. Սոսկալի հրդեհներ, Ս. Լուսաւորչի հնագոյն ճոխութիւններուն եւ յարմարութիւններուն հետ փճացուցած են հետզհետէ անոր գրադարանը՝ եթէ երբեք ապերախտ ձեռքեր ալ գործ ունեցած չեն Ս. Լուսաւորչի գրքերուն հետ:

1. Դիտելու է որ Պատրիարքարան ըսուած ատեն պէտք չէ հիմակուան Պատրիարքարանը հասկնալ, ոչ ալ Մայր-Եկեղեցի ըսուած ատեն՝ արդի Մայր-Եկեղեցին: Ասան զի մեր ուսումնասիրած դարուն մէջ Մայր-Եկեղեցին ոչ այնչափ մեծ էր, ոչ ալ քանի մը Եկեղեցիներէ կը բաղկանար: Մայր-Եկեղեցին էր հիմակուան միջին՝ բուն կամ մայր Տաճարը, բայց աւելի փոքր: Իսկ Պատրիարքներ նախապէս կը նստէին Սամաթիա, Ս. Գէորգ (Սուլու Մանասթըր) Եկեղեցւոյն սենեակներուն (պատրիարքարանի) մէջ: Ետքը փոխադրուեցան Գում-Գափու եւ Պատրիարքարանը Հաստատեցին Մայր-Եկեղեցւոյ բակը: Պէզճեանի ատեն երբ Մայր-Եկեղեցին հիմնական նորոգութիւններ եւ բարեփոխութիւններ կ'ունենայ արդի ձեւովը, Պատրիարքարանը վար կ'առնուն եւ Մայր-Եկեղեցին կ'ընդարձակեն՝ ետեւի, այսինքն՝ արեւելեան կողմէն եւ երկու կողմերուն ալ վրայ կը շինուին նոր եկեղեցիներ: Այն ատենն է որ Պատրիարքարանի Համար կ'որոշուի հիմակուան տեղը եւ կը շինուի Մայր-Եկեղեցիէն դուրս, բայց ճիշդ դէմը. Երուսաղէմատան պէս, որ ի սկզբան, ինչպէս տեսանք, կից էր Մայր-Եկեղեցւոյ եւ ետքը շինուեցաւ արդի տեղւոյն վրայ: (Տէս էջ 24-26. Ծանօթ. 1):

2 Տնակաց սիւնի կը նշանակէ աղքատներու խնամակալութեան գրասենեակ: Աւերագոյն (նոյն անդ) Հաւանական կը գտնելինք թէ Տնակաց Սիւնի կը նոյն ըլլար հին Երուսաղէմատան հետ: Բայց բերանացի աւանդութեան մը համեմատ կ'ըսուի թէ Նալեանի աշխատութեան սենեակն էր այդ: